

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/6

25 դեկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 16.11.2012թ. թիվ 2117300 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 05.10.2012թ. թիվ 2117300 հանձնարարագրի, «Կ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 24.05.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 16.11.2012թ-ին կազմվել է թիվ 2117300 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային ծառայողների կողմից 05.11.2012թ-ին ժամը 16:15-ին ք.Հրազդան, Մ.Բաղրամյան 5-րդ փողոցի 34 հասցեում գործող Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանին ներկայացվեց «ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման թիվ 2117300 հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այդ պահին մեր կողմից կատարվեց բջջային հեռախոսի լիցքավորում 400 դրամ ընդհանուր արժողությամբ, որը Ա/Ձ-ի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Այնուհետ ժամը 16:19-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման գումարը՝ 400 դրամը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման գումարը՝ 400 դրամը, ժամը 16:20-ին մուտքագրվեց ՀԴՄ և ժամը 16:20-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 400 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Կ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի գանգատում մասնավորապես նշված է.

Քաղաք Հրազդան, Մ.Բաղրամյան 5 փողոց 34 հասցեում իրականացրել եմ ծեռնարկատիրական գործունեություն:

Հրազդանի ՏՀՏ պետի 05.10.2012 թ-ի թիվ 2117300 հանձնարարագրի հիման վրա նույն ՏՀՏ-ի հարկային տեսուչներն իրականացրել են ստուգում՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության կապակցությամբ: 05.10.2012թ-ին ավարտել են ստուգման աշխատանքները: Հարկային մարմնի կողմից արձանագրվել են իրականությանը չհամապատասխանող փաստեր, որի արդյունքում 16.11.2012թ-ին կազմվել է թիվ 2117300 ակտը՝ իբրև բջջային հեռախոսի լիցքավորման դիմաց համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու վերաբերյալ:

Համաձայն չլինելով ստուգման ակտի նախագծի հետ գրավոր դիմում եմ ներկայացրել Հրազդանի ՏՀՏ-ի պետին և որպես խախտումը բացառող փաստ ուղղարկել եմ նաև քաղվածք՝ բջջային հեռախոսի լիցքավորման վերաբերյալ՝ ստացված Վիվասել կենտրոնական գրասենյակից:

Իմ կողմից հարկային մարմնին ներկայացված փաստաթղթերից ակնհայտ էր, որ հարկային մարմնին չէր կարող իմ նկատմամբ նման վարչական ակտ կայացնել, այն ակնհայտ անօրինական է, ոչ իրավաչափ վարչական ակտ, հետևապես պետք է այն վերացնել: Մասնավորապես, ըստ հարկային մարմնի՝ նրանց կողմից իբրև 05.11.2012թ-ին ժամը 16:15 կատարվել է բջջային հեռախոսի լիցքավորում 400 դրամ ընդհանուր արժողությամբ, սակայն Վիվասել կենտրոնական գրասենյակի կողմից տրամադրված բջջային

հեռախոսի լիցքավորման քաղվածքից ակնհայտ է, որ նշված ժամկետում լիցքավորում չի կատարվել: Քաղվածքից երևում է նաև դիլերի անունը և ազգանունը, ինչպես նաև այն հեռախոսահամարները, որին լիցքավորում է կատարվել: Արդյունքում ստացվում է, որ ես չեմ խախտել ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների պահանջները և հարկային տեսուչների գործողություններն անօրինական են և չեն համապատասխանում իրականությանը: Հետևաբար իմ կողմից, թույլ չի տրվել վարչական իրավախախտման կամ ակտի հիմք հանդիսացող որևէ գործողություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք 63, 70, 76, 77 հոդվածներով խնդրում եմ անվավեր ճանաչել հարկային մարմնի կողմից կազմված թիվ 2117300 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտը կազմված է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Քննարկվող դեպքում ստուգման ակտում, որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, նշվել է ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ»-ի 19-րդ կետի «բ» ենթակետը:

ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ»-ի 19-րդ կետի «բ» ենթակետի համաձայն. «Պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն), իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող չեկ (կտրոն)»:

ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ»-ի 19-րդ կետի «գ» ենթակետի համաձայն. «Ճառայությունների մատուցման դեպքում՝ չեկը (կտրոնը) տրամադրվում է այդ ճառայության դիմաց կանխիկ վճարում (ներառյալ կանխավճար) ստանալու պահին»:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտում, ըստ էության, սխալ է նշված իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել: Մասնավորապես, քննարկվող դեպքում Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանը (ըստ ստուգման ակտի) իրականացրել է բջջային հեռախոսի լիցքավորում, որի դիմաց հաճախորդին չի տրամադրել ՀԴՄ կտրոն: Այսինքն՝ Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի կողմից մատուցվել է ճառայություն, հետևապես ստուգման ակտում, որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, պետք է նշվեր ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ»-ի 19-րդ կետի «գ» ենթակետը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման

պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նշվեն ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավանորմերի պահանջները ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է համապատասխան ընթացակարգ: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) <ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև>-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների ընթացքում իրականացվող գործողությունների և ստուգման արդյունքում կազմվող ակտում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) մասին:

Շրջաբերական նամակի <ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև>-ը բաժնում նշված է, որ ստուգման ակտում պետք է նշվի գործողությունը փաստացի կատարող անձի անուն-ազգանունը, որը ներառված է հանձնարարագրում:

Քննարկվող դեպքում ստուգման ակտում նշված չէ, թե բջջային հեռախոսի լիցքավորումը փաստացի ում կողմից է կատարվել:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանը ժխտում է ստուգման ակտով արձանագրված խախտումն իր կողմից կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել Ա/Ձ Ալվանդ Մուրադխանյանի կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտվելու փաստը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 16.11.2012թ. թիվ 2117300 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ